05.10.2022
350-62

Կապանի համայնքապետ
Գեւորգ Փարսյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Փարսյան,

2022 թվականի հունիսի 22-ին դատարանը կայացրել է որոշում, որով բավարարվել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության դատական պահանջը: Դատարանի որոշումը պարտավորեցնում է Աշտարակի, Արմավիրի, Գավառի, Հրազդանի, Կապանի, Եղեգնաձորի և Իջևանի քաղաքապետարաններին ինտերնետային կայքերում հրապարակել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված 13 խումբ տեղեկությունները:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի և ի կատարումն դատական ակտի՝ խնդրում ենք տրամադրել Համայնքապետարանի պաշտոնական կաքում տեղադրված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված 13 խումբ տեղեկությունների ակտիվ հղումները:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը ***պատասխանել բացառապես էլեկտրոնային եղանակով:***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am